բաւային լուսամուտի վերայ սաւառնող հրեշտակները, որոնք Յիսուսի՝ մեդալիոնի մէջ՝ անդրին են բռնել, մեծ նմանութիւն են բերում Խոսրով Բ.ի Տաղ Բոստանի այրի կամարների գլխին սաւառնող ոգիների հետ: Այսպիսի սաւառնող հրեշտակներ կը տեսնենք եւ Օձունի վերայ: Նոյնը տեսնում ենք Մցխեթի Ս. Խաչ եկեղեցու դրան կամարակալ քարի վերայ. այստեղ միայն հրեշտակները բոլորակ շրջանակի մէջ հաւասարակող խաչն ունին բռնած, իսկ Պողավանքում Քրիստոսի մեդալիոնը, ըստ Էութեան միւնոյնը. խաչը Քրիստոսի անձի նշանակ քրիստոնէական արուեստի մէջ է.—Զ. դարերում սովորական հասկացողութիւն է:*

Արագածի հարաւային կողերին պատմական Վժան եւ այժմեան Ուշան կոչուած գիւղից քիչ դէպի հիւսիս արեւելք, Հաջի Բայրամ գիւղի մօտ՝ մի գերեզմանական կոթող կար, այժմ Էջմիածնի թանգարանը բերուած, որի մի երեսին Աստուածածնի քանդակն է Յիսուս մանկան հետ, Աստուածածնի գլխին սաւառնող հրեշտակը պսակ է դնում (Պ. 31): Անկախ սորանից Strz.ն, Տաղ ի Բոստանի քարայրի քանդակագործութիւնը աղդուած է համարում ասորա-եգիպտական արուեստից. եգիպտական ոչ հին փարաւոնների, այլ սորա եւ Հելլենա-հռոմէականի խառնուրդից յառաջ եկած հոսանքից, որին միանում է եւ ասորականը: Ահա նորա խօսքերը. Vom syro-egyptishen Kreise abhängig ist auch Tag i Bostan, wo Chosroes II, in der Hirshjagd ähnlich eingeführt ist. Vergl. Ravilson, The Sevent Great Oriental Monarchy, p. 614/5:**

Քրիստոս մօրուքաւոր՝ մեդալիոնի մէջ՝ եւ կողքերից առաքեալները տեսնում ենք եւ ասորական արուեստի մէջ. այսպէս է Լուվրի մի անօթի գօտու վերայ, երկու զուգահեռական հասկերից կազմուած բոլորակ շրջանակների մէջ պատկերաւորած է մօրուքաւոր Քրիստոսը, իսկ կողքերից վեց առաքեալները, Զ. դարի գործ:† Նոյն ժամանակի գործեր են, եւ արուեստի եւ ոճի կատարեալ նմանութեամբ նաեւ Բրիտանական թանգարանի արծաթի բուրվառները (Encensoir), Kerynia-ից: Կողմնակի այս ցուցումները պէտք է կարեւորագոյն ապացոյցներ ընդունուին մեր Պողավանքի ժամանակի եւ հոսանքի որոշման նկատմամբ:

Բայց եւ տեսնում ենք Պողավանքի վերայ դարդեր, որոնք կրկնուած են Հռիփսիմէի, Կարսի Ագրակի եւ այլ շէնքերի վերայ, որոնք իրանական արուեստի սասանեան շրջանն են յիշեցնում: Հէնց Մանուէլի որսորդական տեսարանը սասանեան արուեստի ամենասիրելի մոտիւն էր, թողում ասել, որ կուի ձեւի մէջ եւս որոշ նմանութիւն է նկատւում:

Հայ ճարտարապետութեան մէջ այս երկու հոսանքների, քառանկիւնու վերայ գմբեթաւորի եւ երկայնաձիգ բազիլիքների միութիւնը մատնանշել է Ստրցիգովսկին հայ արուեստին նուիրած իւր մեծ գործի մէջ, Արուճի Ս. Գրիգորը համարելով դորա հնագոյն եւ փառաւորագոյն երեւոյթը—in einer Grossartigkeit, die den vergleich mit den mächtigen kathedralem des Abendlandes und den Barockbauten vom Typus des Gesu im besonderen aushält — այնպիսի հոյակապութեամբ, որ կարող է համեմատուել Արեւմուտքի մեծ մայր եկեղեցիների եւ Gesú տիպի բարոք շէնքերի հետ:*

---

*Տե՛ս մեր Հաւուց Թառի Ամենափրկիչը. եր. 39 եւ 49: Համեմատել A. Grabar. L'art Byzantin. 1938. պատկ. 21, որ 400 թուա կանի գործ է համարւում:

**Strzygowski. L'ancien Art Chrétien de Syrie. Table XII և XIII. Տես եւ Baroness Ravensdalle. Old and New in Persia. The National Geographic Magazine, Sept. 1939. p. 352. A. U. Pope. A Survey of Persian Art. London and New York. 1938. p. 159.

†Strzy. L'ancien Art Chrétien de Syrie. Տպտ. XX. 2.

*Strzygowski. Die Baukunst der Armenier. եր. 188: Նաեւ իւր L'ancien Art Chrétien de Syrie, Paris, 1936, եր. 32: Վրացի գիտնական Զուբինաշվիլու պնդումները Արուճը աւելի ուշ ժամանակի համարելու նկատմամբ, ոչ միայն համոզեցուցիչ չեն, այլ եւ անընդունելի միանգամայն՝ հայ արուեստին ծանօթանձի համար: Այս խնդրին պիտի դառնանք այլ առթիւ, այժմ ձեռքի տակ չունենալով մեր չափագրութիւններն ու նկատողութիւնները Արուճի նկատմամբ: